



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



50ԱՄԵՐԻԿԱ՝ ՅԻՒՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՍԻՆ, 35ԱՄԵՐԻԿԱ՝ ԱՐԵՒՏԵԱՆ  
ԹԵՍԻՆ

## ԾԱՌԱՅՈՒԹԵԱՄԲ ԿԵՐՏՈՒԱԾ ՀՈԳԵԼՈՐ ԱՃԸ ՅԱՌԱՋ ՏԱՆԵԼՈՒ ՅԱՆՁԱՌՈՒԹԻՒՆ

### - ՆՈՐԹ ՅՈԼԻՎՈՒՄԻ ՄԵԶ ԾԽԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՇՄՈՒԹԻՒՆ

Կիրակի, 21 Դեկտեմբերի երեկոյեան, Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Նախագահութեամբ Թեմիս քարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, Ներկայութեամբ պաշտօնական եւ Ներկայացուցչական անձնաւորութիւններու ու մեծաթիւ հաւատացեալներու, տեղի ունեցաւ հանդիսաւոր տօնախմբութիւն մը, Նշելու համար Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ Յիւսիսային Ամերիկայի մէջ ծառայական առաքելութեան սկզբնաւորման 50րդ տարեդարձն ու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Թեմի հաստատման 35ամեակը: Յանդիսութիւնը առիթ եղաւ ոչ միայն վեր առնելու անցեալ տասնամեակներուն մատուցուած ծառայութիւններն ու կատարելու սեղմ գնահատական մը, այլ նաեւ վերահաստատելու երթը նոյն թափով ու նուիրումով յառաջ տանելու յանձնառութիւնը: Յանդիսութիւնը, ինքնին, խտացումն էր այս յանձնառութեան ու շինէ ոգիին...

Տօնակատարութեան Ներկայ ըլլալու համար Լու Անճելը ժամանած էր Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. S. Օշական Ս. Արք. Չոլոյեան: Ներկայ եին Թեմիս նախկին առաջնորդներէն Բարձր. S. Եփրեմ Արք. Թապագեան, Յայ Կաթողիկէ ու Աւետարանական համայնքներու հոգեւոր առաջնորդները, Միսիթարեան վարժարանի տնօրինը, Թեմիս հոգեւորականաց Դասը, Յայաստանի Յանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմեն Լիլոյեան, Ազգ. Կերպոնական Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաժակ Տիքինեան եւ Վահե Եագուպեան, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգեն Յովսեփեան, Արեւմտեան Ամերիկայի Կերպոնական Կոմիտէի Ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրիեան եւ անդամներ, ՀՕՄԻ, Յամազգայինի եւ Յ.Ս.Ը.Ս.ի Շրջանային Վարչութեան Ներկայացուցիչներ, Դաւթեան-Մարիամեան Կրթական Յաստատութեան Վարչութեան անդամներ, Յայկական Ուկրածուծի Յիմսադրամի եւ Յայրենակցական միութեանց Ներկայացուցիչներ, հայկական միութիւններու Վարչականներ, ծխական շրջաններու ժողովականութեան անդամներ, Ազգ.

Առաջնորդարանի բարերարներ եւ մեծ թիւով հանդիսականներ, որոնք լեցուցած եին Եկեղեցին:

Հանդիսութիւնը սկսաւ ժամը 6:20ին. Առաջնորդ Սրբազնն ու հոգեւորականաց դասը Եկեղեցի մուտք գործեցին թափօրով, ու Ներկաներուն հետ կատարեցին Տերունական Աղօթքը: Սուրբն Սրբ. Հազարեան կատարեց Սիացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգները:

Բացման խօսքը արտասանեց հանդիսավարը՝ Դոկտ. Ռուբինա Փիրումեան, որ հակիրճ կերպով անդրադարձաւ յորելենական առիթներուն: Ան նշեց, որ Տեղասպանութեան հետեւանքով գաղթական դարձած Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը յաջորդ տասնամեակներուն ոչ միայն վերականգնեցաւ, այլ դարձաւ յատկապէս Սփիտքի հայութեան լուսատու մեկ փարոսը, որ իր ծառայական առաքելութիւնը տարածեց նաեւ ամերիկան այս ափերը, ընդառաջելով շրջանի հոգեւոր սնունդի ու ազգային արժեքներու հաւատարմութեան հայութեան փափաքին: Այս երեկոյ, ըսաւ հանդիսավարը, կը տունենք Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսին ու օրուան ժողովականութեան կողմէ առնուած պատմական քայլին 50րդ տարեդարձը, ինչպէս նաեւ Արեւմտեան մեր Թեմի 35րդ տարեդարձը: Ան երախտիք արտայայտեց Արեւմտեան Թեմի իրերայաջորդ Առաջնորդներուն՝ S. Սմբատ, S. Եփրեմ, S. Տաթեւ եւ S. Մուշեղ Արքեպիսկոպոսներուն, որոնք տասնամեակներու Ներդրումներով մեր Թեմը հասցուցին այսօրուան վիճակին: Վերջապէս, հանդիսավարը հպարտանքով յայտնեց, թէ ինք եւս գործոն մասնակցութիւն բերած է Թեմին ժողովականութեան գործունեութեան:

## ՎԵՐԱՓԱՌԻ ՊԱՏԳԱՄԸ, ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Այսուհետեւ, ցուցադրուեցաւ տեսաերիգ մը, որուն առաջին բաժինը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամն ու ողջոյնի խօսքն էր, ուղղուած՝ այս տունակատարութեան մասնակցողներուն, իսկ Երկրորդ բաժինը սեղմ բայց ընդհանուր պատմականը կ'ընէր Արեւմտեան մեր Թեմին, իբրեւ շարունակողն ու մեկ զարգացումը՝ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Հիւսիսային Ամերիկայի Թեմի առաքելութեան:

Իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ յորելենական այս հանդիսութիւնը պետք է առիթ ծառայէ անդրադառնալու Կաթողիկոսութեան առաքելութեան ու մեր ժողովուրդի կեանքին մէջ միջնաբերդ մը ըլլալու Ազգ. Առաջնորդարանի հանգամանքին, ապա նաեւ սեւեռելու դեպի ապագայ, ծրագրելու՝ թէ ծառայական առաքելութիւնը ի՞նչ ձեւերով կարելի է շարունակել ու աշխուժացնել: Վեհափառ Հայրապետը այս առիթով ողջոյնի խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազնին, ժողովականութեան ու մաղթեց, որ բարձրեալն Աստուած Նորանոր ծաղկում շնորհէ Թեմին ու Եկեղեցւոյ առաքելութեան կենսագործման:

Ժապաւենին Երկրորդ բաժինը թառուցիկ ակնարկ մըն էր Սիսէն գաղթական դարձած Ս. Աթոռի Վերականգնումի ընթացքին, որուն նորագոյն ծաղկումները արտայայտութիւն գտած են նաեւ Արեւմտեան մեր Թեմին մէջ,

Եկեղեցիներու եւ դպրոցներու կառուցումով, ինչպէս նաեւ քրիստոնեական ու հայեցի դաստիարակութեան ու Երիտասարդական միաւորներու կազմաւորումով: Խօսք ունեին Առաջնորդ Սրբազանը, Կրօնական ժողովի ատենապետ Գերապ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ Խևամակալ Մարմինի ատենապետ Տիար Մարք Կետիկեան, որոնք որոշ տեղեկութիւններ ու արժեւորում կատարեցին Ազգ. Առաջնորդարանի ծառայական տարբեր ասպարեզներուն՝ Զրիստոնեական դաստիարակութեան, Ազգային Վարժարաններու, Երիտասարդական եւ այլ աշխատանքներուն մասին:

## **ՕՉԱԿԱՆ ՍՐԲԱՉԱՆ. «ԸՆԴՀԵՄ ԱՊԱՉԳԱՅԻՆ ԱՇԽԵՑՈՒԹԵԱՆ»**

Յանդիսավարը ապա հրաւիրեց Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանը, որպէսզի արտասանէ իր սրտի ու ողջոյնի խօսքը: Օշական Սրբազանը առաջին հերթին ողջունեց Առաջնորդ Սրբազանն ու պաշտօնական անձնաւորութիւնները, եւ գոհունակութիւն արտայայտեց, որ բաժնեկից է այս պատմական հանդիսութեան: Ան անդրադարձաւ Յիւսիսային Ամերիկայի Թեմի հաստատման պատմական որոշումին, ընդգծելով, որ անիկա պատահականութեան արդինք չէր, այլ այդ քայլը առնուեցաւ այնպիսի հանգրուանի մը, երբ համայսավար բռնատիրութիւնը կը փորձէր իր հակակրօն ու ապազգային ազդեցութիւնը տարածել սփիւրքեան օճախներու վրայ, ջլշել ազգային արժեքներն ու վարքագիծը: Օշական Սրբազանը շեշտեց, որ անցեալ տասնամեակներուն կանգնած Եկեղեցիներն ու դպրոցները, ու անոնց միջոցով ծաւալած գործունեութիւնը ամենէն պերճախօս վկայութիւնն են տրուած որոշումին ու տարուած աշխատանքին արդինաւորութեան, աշխատանք՝ որուն մասնակից եղան մեր միութիւնները, կազմակերպութիւնները, պահպանելով ազգային գիծը: Ան երախտագիտութեամբ ոգեկոչեց յիշատակը արդեն պատմութեան անցած երախտաւորներուն ու մաղթեց, որ այսօրուան ու վաղուան գործող ձեռքերը կերտեն նոր ամեակներ:

## **«ԸՆԴԱԿՈՍՁ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ»**

Առաջին բանախօսն էր իրաւաբան Արման Ջեսեան, որուն թեմական ծառայութիւնները սկիզբ առած են Արեւմտեան Թեմի հաստատումին առաջ ու շարունակուած՝ անցեալ 35 տարիներուն:

Տիար Ջեսեան Յիւսիսային Ամերիկայի, ապա նաեւ Արեւմտեան մեր Թեմի հաստատումը ներկայացուց իբրեւ ուղղակի շարունակութիւնը Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ամբողջ պատմութեան, որ սկսած է Յայաստանի քրիստոնեացումով ու կտրած է մեր պատմութեան ուրախ ու տիսուր հանգրուանները: Ապա, ան ծանրացաւ այս պայմաններուն վրայ, որոնք հարկադրեցին ամերիկեան ափերու վրայ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական գործունեութեան սկզբնաւորումը,

որովհետեւ համայնավարական ազդեցութեան տակ, Մայր Աթոռ Ս. Եջմիածինը, ծանօթ ճնշումներուն ենթակայ ըլլալով, չյաջողեցաւ ժողովուրդի բոլոր զաւակներուն հոգեւոր մատակարարում կատարել, նկատի ունենալով, որ կար հատուած մը, որ դեմ էր համայնավարական ազդեցութիւններուն ու ապազգային ուղիին: Տիար Շեուեան հակիր պատմականը ըրաւ այն զարգացումներուն, որոնք առաջնորդեցին Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեջ առանձին թեմի մը հաստատման, նշելով, որ այդ քայլը եւս բնական արդիւնքն էր ժամանակի պայմաններուն, որովհետեւ հայութեան թիւը արագ աճ արձանագրեց այս ափերուն ու ստեղծեց Եկեղեցիներու եւ դպրոցներու յաւելման հարկադրանքը, ու տուեալ պայմաններուն մեջ, այլեւս անհնարին էր համակարգը կառավարել Նիւ Եորքի Աշխարհարանին:

Յարգելի բանախօսը կանգ առաւ անցեալ 35 տարիներուն արձանագրուած նուաճումներուն եւ իրերայաջորդ թեմակալ Առաջնորդներու եւ ժողովական կազմերու ունեցած ներդրումներուն վրայ, միաժամանակ վեր առնելով Ազգային Առաջնորդարանի նոր շենքի ծրագիրին իրագործումն ու այս հանգրուանեն անդին պարզուող նոր մարտահրաւերները: Ան իր խօսքը Եզրափակեց շնորհակալութիւն արտայայտելով բոլոր գործողներուն, ապա նաեւ S. S. Արամ Ա. Կաթողիկոսին, որ հոգածու աչքով կը հետեւի նաեւ մեր թեմի գործունեութեան ու կը հանդիսանայ աշխատանքի առաջնորդը:

## «ԿԱԹՈՒԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ՝ ԵՐԵԿ, ԱՅՍՈՐ ՈՒ ՎԱՂԸ»

Երկրորդ բանախօսն էր Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեան: Ան իր խօսքը սկսաւ Դեկտեմբերի սկիզբը տեղի ունեցած Ազգային Ընդհանուր ժողովի փակման առիթով Վեհափառ Հայրապետի այն պատգամով, ուր Ն. Ս. Օծութիւնը նշած էր. «Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ իր դրական ու շինհ առաքելութիւնը ամեն մակարդակի վրայ»: Ան շեշտեց, որ այս յանձնառութիւնը նորութիւն չէ, որովհետեւ անիկա եղած է Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրերայաջորդ գահակալներուն ու միաբանութեան, ինչպէս նաեւ Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող թեմերուն ու միաւորներուն յանձնառութիւնը: Բանախօսը շեշտեց, որ Կաթողիկոսութիւնն ու թեմերը, հաւատարիմ՝ մեր Եկեղեցւոյ առաքելութեան, ծառայութեան մարմնացում են, ինչպէս նաեւ կը հանդիսանան Տեղասպանութեան ճանաչման ու հայութեան իրաւունքներուն հետապնդման յառաջապահները: Տիար Տիգիճեան յիշեցուց, որ 50 տարի առաջ, Ամերիկայի մեջ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան սկզբանաւորումը արդիւնք էր պատմական հրամայականի մը, որ կու գար հոգեւոր սնունդի ծարաւ հայ զանգուածներու պահանջեն, քայլ մը՝ որ կաթողիկոսութեան աշխարհագրական տարածքի ընդլայնումը չէր հետապնդեր, այլ կը բաւարարէր իր Եկեղեցւոյ ու ազգային արմատներուն հետ հաղորդ մնալու հայ զանգուածներու ծարաւը:

Տիար Տիքիճեան հակիրծ կերպով անդրադարձաւ Եկեղեցաշինութեան ու դպրոցաշինութեան այս աշխատանքներուն, որոնք իրագործուեցան յատկապես մեր Թեմին մեջ, անցնող 35 տարիներուն, Նշելով, որ անոր ընդիանուր գնահատականը կարելի չէ կատարել քանի մը բառով, եւ սակայն, այսօր պարծանք ու գոհունակութիւն կը պատճառէ բոլորիս: Ան երախտագիտութեան ու յարգանքի արտայայտութիւն ունեցաւ այս գործին մասնակից հոգեւորական ու աշխարհական ծառայողներուն մասին, աւելցնելով, որ այսօրուան հանգրուանք կը հարկադրէ նաեւ հարց տալ, թէ սկսուած գործը ինչպէս կարելի է շարունակել ու զարգացնել արժանաւորապես: Ան կանգ առաւ յատկապես նորահաս սերունդներու կազմաւորման մեջ Յայ Դպրոցին վերապահուած դերին, յիշեցնելով, որ թեմական աշխատանքներուն մեջ կարեւոր տեղ ունի Ազգային վարժարաններու ցանցը: Ապա, ան վեր առաւ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր այժմու գահակալ Վեհափառ Յայրապետին ազգային ու միջազգային դերակարատութիւնը. Ներազգային գետնի վրայ, ան լուսարձակի տակ առաւ Կաթողիկոսութեան հոգեւոր ու ազգային գործունեութիւնը, մեր Եկեղեցւոյ միասնականութեան պահպանման անոր հետամտութիւնը, իսկ միջազգային գետին վրայ անոր ունեցած կամրջողի դերը, որուն նորագոյն արտայայտութիւնը Եղաւ Ն.Ո.Օ.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Վատիկան այցելութիւնը՝ Նոյեմբերի վերջերուն: «Վեհափառ Յայրապետին ու անոր շքախումբին Վատիկան այցելութեան առիթով ցուցաբերուած բացառիկ ընդունելութիւնը, յարգանքն ու գործակցական ոգին միայն նորագոյն վկայութիւն են, եւ ցոյց կու տան միջ-Եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց մեջ Անթիլիասի դրական ու շինիչ գործին արդիւնքը, կամրջողի վաստակը: Անոնք ապացոյց են, որ Անթիլիասը պատսեշի վրայ է ու պիտի մնայ իբրեւ միջազգային ու միջին արեւելեան քաղաքական-կրօնական կեդրոն, շնորհիւ Կիլիկեան Ս. Աթոռին ու Վեհափառ Յայրապետին անձնապես վայելած վարկին», ըսաւ բանախօսը: Ան այս առիթով անդրադարձաւ նաեւ Ազգ. Ընդհանուր Ժողովի իրագործումներուն, որոնք, վերջին տարիներուն տարուած աշխատանքներու քննարկումն անդին, առիթ Եղած են յառաջիկայի աշխատանքները ծրագրելու եւ նախագծելու: Ան շեշտեց, որ կաթողիկոսութիւնն ու թեմերը պիտի շարունակեն ժողովրդանուեր աշխատանքը, անհրաժեշտ է դիմել արդի արհեստագիտութեան ընձեռած դիլութիւններուն՝ զարգացնելու համար հայակերտումի ու հայապահպանման նուիրական գործը, իսկ Կաթողիկոսութիւնը հետամուտ պիտի ըլլայ նուիրապետական մեր Աթոռներուն հետ գործակցութեան սերտացման, ինչպէս նաեւ բռնագրաւեալ Կիլիկիոյ մեջ Սոսյ Աթոռին ու ընդհանրապես հայութեան բոլոր իրաւունքներուն հետապնդման:

Խօսքի վերջին բաժինով, Տիար Տիքիճեան անհրաժեշտ նկատեց Երիտասարդութիւնը Ներգրաւել մեր ազգային կեանքին մեջ ու զայս լուսաբանել մեր Եկեղեցւոյ յատկանիշներուն մասին, որպէսզի Երիտասարդութիւնը անդրադառնայ որ Յայց. Եկեղեցին բացառաբար ազգային Եկեղեցի է, ի տարբերութիւն այլ Եկեղեցիներու եւ աղանդներու: Տիար Տիքիճեան իր խօսքը Եղրափակեց ընդգծելով, որ մեր Թեմը անաւարտ գործ ունի ու պիտի շարունակէ իր առաքելութիւնը, ու վերջապես, մեջբերեց

Վեհափառ Հայրապետի հետեւեալ պատգամը. «ՄԵԿ ընտանիք ենք մենք, եւ պետք է մեր գործը եւս մեկ կամարի տակ դիտենք: Մեր Սուրբ Աթոռին առաքելութիւնը պիտի շարունակուի վերանորոգ հաւատքով, տեսիլքով ու կամքով, միշտ մեր աչքերուն դիմաց ունենալով մեր հայրենիքը, եւ մեր ազգի բոլոր նուիրական արժեքները»:

Յայտագիրը ուներ գեղարուեստական բաժին: Տաղանդաւոր երգիչներ Ռազմիկ Մանսուրեան եւ Անահիտ Ներսիսեան հանդէս եկան զուգերգով մը՝ «Սարտիկի Երգ»: Իրանահայ Միւթեան երգչախումբը կատարեց երեք Երգ՝ «Սարդարապատ», «Երեւան-Երեբունի» եւ «Հայրենիքիս հետ», որուն մենակատարի բաժինները կատարեցին Ռազմիկ Մանսուրեան ու Անահիտ Ներսիսեան: Խմբավարն էր հայրենի արուեստագետ Միքայէլ Աւետիսեան: Երգչախումբն ու մենակատարները յաջողութեամբ կատարեցին երգերը, խանդավառութիւն ստեղծելով Եկեղեցւոյ մէջ ու արժանանալով հանդիսականներու ծափողջոյններուն: Գեղարուեստական բաժինը յաւելեալ փայլք տուաւ ձեռնարկին:

Նշենք, որ երաժշտական բոլոր բաժիններուն երգեհոնի վրայ ընկերացաւ Փրոֆ. Լեւոն Կբրահամեան:

## ԱՌԱՋՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Հանդիսաւոր տօնակատարութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը. ան ողջունեց Ներկայ պաշտօնական անձնաւորութիւններն ու Ներկայացուցչական դէմքերը, որոնց շարքին՝ Հայաստանի գլխաւոր հիւպատոսը, կուսակցական դէմքեր, Հայ Աւետ. ու Հայ Կաթողիկէ համայնքներու հոգեւոր առաջնորդները, միութենական եւ ծխական շոշաններու ժողովականութեան Ներկայացուցիչները եւ շնորհակալութիւն յայտնեց անոնց Ներկայութեան համար: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց Օշական Սրբազանին, որ այս Երեկոյ մեզի հետ է, բաժնեկցելու մեր ուրախութիւնն ու հպարտանքը, իսկ առաւօտուն, ան մասնակից Եղաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Պարատագին ու հաւատացեալներուն ուղղեց պատգամ մը: Ան Հայաստանի դիւնագիտական Ներկայացուցիչին, կուսակցական ու միութենական Ներկայացուցիչներուն ու հոծ բազմութեան Ներկայութիւնը ցուցանիշ Նկատեց Արեւմտեան Թեմի առաքելութեան ու գործին Նկատմամբ միասնականութեան ու զօրակցութեան, իսկ նոյնինքն հանդիսութիւնն ու անոր տիրապետող մթնոլորտը Նկատեց հարազատ մեկ հայելին՝ անցեալ տասնամեակներու իրագործումներուն, ինչպէս նաեւ Երախտագիտութեան արտայայտութիւն՝ մեզ այս հանգրուանին հասցնող անցեալի ու ժամանակակից բոլոր նուիրեալներուն: Այս բոլորին համար, Առաջնորդ Սրբազանը փառք տուաւ Աստուծոյ, որ առիթը ընծայած է Վայելելու իրագործումներու արդիւնքը, նաեւ որդիկան Երախտագիտութեան ու շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, իր հոգածու Վերաբերմունքին համար, նշելով, որ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը հանդիսանայ ուղեցոյց: Ան յարգանքի ու Երախտագիտութեան խօսք ուղղեց Թեմիս նախկին առաջնորդներուն ու ժողովականնութեան ճամբով ծառայողներուն, որոնք մշակած են մեր Թեմի

անդաստաններն ու աշխատանքի դաշտերը: Առաջնորդ Սրբազնը գնահատանքով արտայայտուեցաւ յայտագիրին բոլոր մասնակցողներուն մասին, ապա նաեւ շնորհակալութեան խօսքեր ուղղեց ձեռնարկին յաջողութեան նպաստող հովանաւորներուն ու նուիրատուներուն, մասնաւորաբար Գարոլան ընտանիքին, որ հոգացած էր այս հանդիսութեան նիւթական կարիքները, Տեր եւ Տիկին Կարօ եւ Սոսի Եշկիեան ամոլին, որ հոգացած էր այս առիթով լոյս ընծայուած գորոյկին նիւթական բաժինը, եւ վերջապէս՝ դամասկոսաբնակ ազգային բարերար Տեր եւ Տիկին Գաբրիէլ Չեմպերճեանի, որոնք նուիրած էին Ազգ. Առաջնորդարանի նշանակով զարդասեղները: Գնահատանք՝ նաեւ իրանահայ Միութեան, ուրուն երգչախումբը, տաղանդաւոր արուեստագետ Միքայէլ Աւետիսեանի դեկավարութեամբ, սիրայօժար մասնակցութիւն բերաւ սոյն տօնակատարութեան ու ծաղկեցուց ձեռնարկը: Վերջապէս՝ շնորհակալութեան ու գնահատանքի խօսք՝ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան, որ հիւրընկալեց հանդիսութիւնը, ու բոլոր անոնց՝ որոնք գործնապէս ու բարոյապէս նպաստեցին այս հանդիսութեան մարմնաւորման:

Առաջնորդ Սրբազնը անդրադարձաւ Վեհափառ Յայրապետի կոնդակի այն տողերուն, ուր կը նշուեր, թէ այս հանդիսութեան առիթով, «Վստահաբար պիտի յիշեք հեռաւոր թէ մօտաւոր անցեալի այն բոլոր նուիրեալները, հոգեւորական թէ աշխարհական, ժողովական թէ բարերար, կազմակերպութիւն թէ անհատ, որոնք իրենց անսակարկ մասնակցութիւնը բերին Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր ու ազգային ծառայութեան, Արեւմտեան Թեմին մէջ: Ծառայութիւնը կարելի չէ ամբողջականօրէն գնահատել որեւէ չափանիշով: Ծառայութեան դիմաց պէտք է խոնարհիլ ու գոհութիւն տալ Աստուծոյ, որ իր Եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայութեան գանձանակին մէջ մեր "այրիի լուման" հնելու մեծ պատիկն արժանացուց մեզ: Վստահ ենք որ այս ոգիով ու գիտակցութեամբ, ինչպէս նաեւ մեր Եկեղեցւոյ ու ազգին միասնականութիւնը ամրապնդելու, Յիւսիսային Ամերիկայի մէջ մեր Եկեղեցւոյ առաքելութիւնը հզօրացնելու եւ հայրենակերտումի ու ազգակերտումի համազգային առաքելութեան աւելի գործոն մասնակցութիւն բերելու նպատակասլաց տեսիլքով պիտի ողջունէք 50-ամեակ»: Այս երեկոյ, մենք այս պատգամը իրագործեցինք:

Առաջնորդ Սրբազնը յայտնեց, որ Երախտագիտութեան ու յարգանքի յատուկ արտայայտութիւն պէտք է ունենալ յատկապէս S.S. Չարեհ. Ա., Խորեն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսներուն, ինչպէս նաեւ Ամերիկայի թեմի առաջին Առաջնորդ Տ. Յանդ Արք. Խաչատուրեանի, որոնց պատմակերտ որոշումներով ու ճիգերով սկիզբ առին թեմական աշխատանքները ու ապրեցան ծաղկումներ, տարածում: Ան յիշեցուց, որ յարգանքի արտայայտութիւն մը եղաւ նոյն օրը առաւօտուն, թեմիս բոլոր Եկեղեցիներուն մէջ անոնց ու այլ նուիրեալներու յիշատակն մատուցուած հոգեհանգիստը:

Առաջնորդ Սրբազնը այս առիթով նաեւ գոհութիւն տուաւ Աստուծոյ, որ մեր ժողովուրդին վիճակուած բազում վտանգներուն բաժնեկից ու փրկուած Կիլիկեան Ս. Աթոռը հաստատեց Լիբանանի մէջ, անոր ընծայեց Վերականգնելու եւ Յայց. Եկեղեցւոյ առաքելութիւնը վերանորոգելու

առիթները: Ան ընդգծեց, որ Կաթողիկոսութեան վերականգնումն ու վերածաղկումը եղաւ մեր ժողովուրդի միասնական ճիգերուն արդիւնքը, որովհետեւ մեր ջանադիր Վեհափառ Հայրապետներն ու միաբանները իրենց կողքին ունեցան ժողովուրդին զօրակցութիւնը: Ան նկատել տուաւ, որ այսօր, 35ամեակի հանգրուանին, կարելի է հպարտութեամբ ու գոհունակութեամբ նայիլ դեպի Ետ, ու տեսնել, որ բազմաթիւ ծրագիրներ արդէն իրականութիւն դարձած են, իսկ պիտի գայ սերունդ մը, որ յետադարձ ակնարկով մը պիտի նայի այսօրուան ծրագիրներուն, որոնք իրականութիւն պիտի դառնան տասնամեակներ Ետք: Առաջնորդ Սրբազնը վստահութիւն յայտնեց, որ այսօրուան ու ապագայի դժուարութիւններն ալ պիտի յաղթահարուին, ինչպէս կը վկայեն ցարդ հարթուած դժուարութիւնները, որովհետեւ Առաջնորդարանն ու Եկեղեցին միայնակ չեն, անոնք իրենց կողքին ունին մեր միութիւններն ու կազմակերպութիւնները, բարերարներն ու ամբողջ ժողովուրդը, որոնք կը հաւատան մեր առաքելութեան, կը զօրակցին մեզի, իրազեկ են ու բաժնեկից՝ այս մարտահրաւերներուն, որոնց Ենթակայ են հայրենիքն հեռու ապրող հայորդիններն ու նորահաս սերունդները: «Ապագային կը նային յոյսով, վերանորոգ կամքով, բայց Աստուծոյ ապահնելու պատրաստակամութեամբ», շեշտեց Առաջնորդ Սրբազնը:

Առաջնորդ Սրբազնը նաեւ նկատեց, որ «յոթելենական նման հանդիսութիւններ բոլորիս համար առիթ են վերանորոգելու մեր հաւատարմութիւնը մեր Ս. Աթոռին ու անոր Եկեղեցանուեր ու ազգաշեն առաքելութեան: Յանկապէս հայրենիքն հեռու ապրողներս շատ լաւ գիտենք, ամեն օր կը զգանք, կ'ապրինք այս տագնապները, որոնց Ենթակայ են մեր ժողովուրդի զաւակները, մասնաւորաբար մեր նոր սերունդը: Մեր ազգային ու քրիստոնեական արժեքները, աւանդութիւններն ու ժառանգութիւնները օր աւուր Ենթակայ են ոչ-հայկական ազդեցութիւններու, որոնց մաշումի ու անեացումի սպառնալիքներուն դիմաց զրահ ու պատուար են մեր Եկեղեցին, Ս. Աթոռոյս առաքելութեան կենսագործման լծուած Առաջնորդարանս, իր կողքին ունենալով ազգային մեր բոլոր միաւրինե»:

«Ահա այս յանձնառութեան վերահաստատման ու աշխատանքի դաշտերը աւելի եւս ընդարձակելու մարտահրաւերին դիմաց կը գտնենք մենք մեզ, յոթելենական այս պատմական հանգրուանին: Կը կանգնինք կարեւոր անկիւնադարձի մը դեմ յանդիման: Ու մենք մեր առաքելութիւնը պիտի շարունակենք ա՛յս յանձնառութեամբ, ա՛յս մօտեցումով, մեր Ս. Աթոռին նուիրեալ առաքելութիւնը զարգացնելու եւ դեպի նոր նուածումներ առաջնորդելո՛ւ կամքով: Յամեակը մեզ կը ունէ նոր մարտահրաւերու, ազնիւ ու քաղցր մարտահրաւերու դեմ յանդիման: Ու մենք պիտի ընդառաջենք անոնց, ինչպէս ըրած ենք անցեալ 35 ու 50 տարիներուն»:

## ՆՈՐ ԾՈՒԽ՝ ՆՈՐԹ ՃՈԼԻՎՈՒՏԻ ՄԵԶ

Առաջնորդ Սրբազնը շեշտեց, որ յիշեալ ազնիւ մարտահրաւերու ընդառաջ երթալու ու ժողովուրդի հոգեկան պահանջներուն մատակարարման աշատանքը նոր ծաւալ պիտի ստանայ 35ամեակի

հանգրուանեն ետք, եւ իբրեւ անմիջական արտայայտութիւն այս կամքին՝ ան յայտարարեց, որ Ազգային Իշխանութիւնը՝ Կրօնական ժողովն ու Ազգ Վարչութիւնը որոշած են նոր ծուխ մը հաստատել Նորթ Հոլիվուտի շրջանին մէջ, շրջանի Եկեղեցին պիտի կոչուի ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ: Շրջանին մէջ առաջին Ս. Պատարագը պիտի մատուցուի Ս. Ծնունդի տօնին օրը, 6 Յունուարին, պիտի պատարագէ Գերապ. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան, որ նշանակուած է Նորակազմ շրջանի հոգեւոր մատակարար: (Առաջնորդ Սրբազնին այս յայտարարութիւնը դիմաւորուեցաւ ծափողջոյնսերով): Ան իր խօսքը Եզրափակեց կոչ ուղղելով, որ ապագային նայինք հաւատքով, Աստուծոյ ապահնելով, եւ աղօթելով, որ Աստուծած անսասան պահէ մեր Եկեղեցին, ժողովուրդը, շենցն մեր ազգն ու հայրենիքը եւ մեր քայլերը առաջնորդէ դեպի լուսաւոր ապագայ:

Առաջնորդ Սրբազնին Պահպանիչն ետք, Երգչախումբը ու Ներկաները միասնաբար Երգեցին «Կիլիկիա»ն:

## WESTERN PRELACY 35<sup>TH</sup> ANNIVERSARY CELEBRATION

On the evening of Sunday, December 21<sup>st</sup>, hundreds of faithful gathered at St. Mary's Church in Glendale to celebrate the 50<sup>th</sup> anniversary of the North American Prelacy and the 35<sup>th</sup> anniversary of the Western Prelacy. The event took place under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, H.E. Archbishop Yeprem Tabakian, leaders of Catholic and Evangelical churches, clergy and council members, Consul General of Armenia the Honorable Armen Liloyan, Central Executive Council members Mr. Khajag Dikjian and Mr. Vahe Yacoubian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee representative Mr. Avedik Izmirlian and members, Delegates, Boards of Trustees, members of community organizations, parishes, sponsors, and parishioners.

The celebration began with the procession of the Prelate and clergy members into the church. Following the Lord's Prayer was the singing of the American and Armenian anthems by Deacon Suren Hazarian.

Master of Ceremonies Dr. Rubina Peroomian welcomed the guests and briefly reflected on the dual anniversaries, noting that following the Genocide the Catholicosate not only reestablished itself but became a beacon for Diaspora Armenians as its jurisdiction spread to far away lands such as the United States.

In the first part of the video presentation that followed, guests heard the message of H.H. Catholicos Aram I, who stressed that occasions such as these should be a time of reflection on the mission of the Catholicosate and its Prelacies and an opportunity to look to the future and to the expansion and advancement of our endeavors.

The second portion of the video was a history of the Catholicosate of Cilicia from Sis to its settlement in Antelias and the subsequent growth of the Prelacies and specifically the Western Prelacy with its network of churches and

schools. Accounts on the various endeavors of the Prelacy from Christian Education to our schools to youth activities were offered by the Prelate, Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Central Executive member Mr. Khajag Dikijian, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Board of Regents Chair Mr. Mark Guedikian.

Archbishop Choloyan was then invited to offer his remarks. His Eminence greeted the Prelate and guests and expressed his appreciation for sharing in the celebration. He reflected on the circumstances leading to the decision to establish the North American Prelacy stating that the tremendous growth of the Prelacies in the past few decades is the greatest validation of that decision.

The first keynote speaker was Mr. Armand Keosian, Esq., who addressed the guests in English. Mr. Keosian presented the history of the North American and Western Prelacies as a direct continuation of the mission of the Armenian Apostolic Church since its founding. He spoke also of the historical conditions leading to the establishment of the North American Prelacy and the subsequent establishment of the Western Prelacy as a response to the growing Armenian population in the Western United States. Mr. Keosian reflected also on the growth of the Western Prelacy over the past thirty-five years thanks to the efforts of the Prelates and council members. He concluded by thanking H.H. Catholicos Aram I for his leadership and guidance and to all those who have contributed and continue to contribute to the progress of the Prelacy.

The Armenian keynote speech was delivered by Central Executive Council member Mr. Khajag Dikijian, who began with a quote by Catholicos Aram I at the conclusion of the General Assembly a few weeks ago, "The Catholicosate of the Great House of Cilicia will continue its vital mission on every level", a sentiment shared by each successive Catholicoi and Prelates. He reiterated that the mission of the Catholicosate of Cilicia spread to North America out of necessity, to provide for the spiritual needs of the emergent population. Mr. Dikijian then focused specifically on the Western Prelacy and its advancements over the past thirty-five years including the establishment of a significant number of new churches and schools. He then spoke of to the authority of Catholicos Aram I in the Armenian community as a spiritual leader and in the international sphere as a bridge between different spiritual leaders, citing the recent visit with H.H. Pope Benedict XVI at the Vatican. Mr. Dikijian also referred to the General Assembly, which took place recently in Antelias, during which the activities of the past few years were analyzed and new ideas and suggestions proposed which the Catholicosate and Prelacies will diligently pursue. Mr. Dikijian concluded by stressing how vital it is to bring the youth closer to our church and for them to become well familiarized with the history of our church.

The program also included an artistic portion in which singers Razmig Mansourian and Anahid Nersesyan participated, accompanied by Prof. Levon Aprahamian, and the Armenian Society of Los Angeles Choir, led by Mikayel Avedissian and also accompanied by Prof. Levon Aprahamian. The artistic

portion added beautifully to the program and was received by the audience with great applause.

The celebration came to a close with the Prelate's concluding remarks. The Prelate thanked Archbishop Choloyan for participating in the celebration and all the guests in attendance, stating that their presence is an indicator of their faith in and support of the mission of the Prelacy. The Prelate thanked God for allowing us to enjoy the fruits of our labor and thanked His Holiness for his constant guidance. He commended and thanked the participants of the program, as well as thanked the sponsors who contributed to the realization of the event including the Carolan family who had sponsored the event, Mr. and Mrs. Garo and Sossy Eshgian for sponsoring the publication of the booklet, Mr. and Mrs. Gabriel Chemberjian for the anniversary pins, and St. Mary's Church for hosting the event.

The Prelate continued by citing the following passage from the encyclical of His Holiness Aram I on this occasion as follows, "On this occasion, when you recall the faithful service given to our people, we are certain that you will remember all of the devoted persons of the far and near past, both clergy and lay, council members and benefactors, organizations and individuals, who brought their unconditional participation to the Great House of Cilicia's spiritual and national service within your prelacies. It is impossible to completely recognize the service given within any parameter. We must bow down before service and thank God that in the treasury of the service of His people to His church can be found the "widow's penny," which brought us great honor. We are confident that it is with this spirit and understanding and for the strengthening of the unity of our church and nation, and for the active participation in building our homeland and nation that you will celebrate the 50th anniversary," adding that the evening's celebration was a reflection of that message.

The Prelate paid tribute to H.H. Catholicos Zareh I, H.H. Catholicos Khoren I, H.H. Catholicos Karekin II, H.E. Archbishop Hrant Khatchadourian of blessed memory, and all the clergy and lay persons for their vision and historic decisions which led us to where we are today. The Prelate reflected on past accomplishments with joy and pride stating that if we encounter challenges as we embark on our future endeavors we need only to look at the past thirty-five and fifty years to realize that we will overcome those challenges because we have with us the support and encouragement of our organizations, sponsors, and friends who believe in our mission and share in our challenges and successes.

The Prelate stressed that "milestones such as these offer an opportunity for us all to renew our allegiance to the Holy See of Cilicia and its worthy mission. We all know very well the modern challenges with which our people, and our youth specifically, are confronted. Each and every day our centuries-old and precious national and Christian values, traditions, and heritage are being undermined by external influences. Our Church and our Prelacy is the armor that safeguards us from these perils. At this stage we find ourselves at an important crossroads. Let us continue to serve with this same determination

and vigor and look to reach new heights. The 35<sup>th</sup> anniversary puts us face to face with new challenges we will counter just as we have over the past 35 and 50 years."

The Prelate concluded by stating that the mission of the Prelacy would be expanding in the immediate future and announced the establishment of a new parish in North Hollywood, news that was received with great applause from the audience. The parish will be called the Armenian Apostolic Church of North Hollywood, and the first Divine Liturgy will be celebrated on January 6 on the Feast of the Birth and Epiphany of our Lord Jesus Christ, by Very Rev. Fr. Muron Aznikian. In conclusion, the Prelate called on each individual to look to the future with faith, to place their utmost trust in God, and to pray to Almighty God to safeguard our church and people and to guide us towards a bright future.

The celebration came to a close with the Prelate's benediction and "Gligia".